

հազար են ու աւելի այսօր մեր գաղութները երկպառակող, փառահերձող մեծափառ ննիները, որոնք գաղութները կը խաչեն, ամէն օր ֆիչ մը աւելի, կոնակին տուած աս ու ան հաշուետախտակներուն, մէկը միւսէն գազիք, ամէն երանգէ դաւաճանութեանց հագցնելով գոյնգոյն պաստառը աս ու ան գաղափարականներուն:

Ու եղած է, աւա՛ղ, իմ ալ պատանութիւնը, որ նոյնքան անկարելի կը թուի, որքան իմ ծերութիւնը, երբ իմ աչքերը կ'իյնան իմ շրջապատին ու թիզ մը հողին, որ կը սպասէ իմ տառապանքիս շիջումը ընդունելու: Ո՛վ կանանչորակ գարունը մեր գերեզմանին, ուր հողը չէր գիտեր մեռնիլ: Ու՛ որ՛վ լալկան, հոտած, բոլոր չորութիւնը սա սուրբ որակւած աշխարհներուն. ու մրկած, կոնծած ամայի աղեկտուր հանդէսը, ուր մահն իսկ կը վախճայ ինքնիրմէ: Ու ճիշդ է ասիկա դարձեալ հոգեղէն ալ մարգին համար: Ինչ որ գաղթարանն է այսօր, ամբոխն է մարդոց, որոնց խցուած է ամէնէն խորունկ գգայարանքը, ան՝ որով ժողովուրդ մը ինքզինքը կ'ըլլայ, ատկէ ուժ կ'առնէ եւ ոչ թէ գայն կը ջանայ փանդել իր մէջէն, ամօթ մը պակաս տեղաւորելու համար խղճի սեմին: Բացի Ամերիկաներէն՝ եղբր եմ Սփիւոֆի բոլոր հոծ ու կարեւոր կայքերուն: Եղբր եմ մա՛նաւանդ ամէն գոյնէ ու խաւէ մարդոց ոլորտներուն: Ու ամէն տեղ մարդիկ նոյնն էին: Այսինքն՝ իմ տարիքիս մօտիկներ, գերեզմաններէն մերժուած, աշխարհ նետուած ուրուականներ, գորս այդ աշխարհը կը ջանար պատուհասել՝ թերեւս իրենց գերագոյն մեղքը իրենց յիշեցնելու չարիքը յաւերժացնողներ նկատելով: Ողբերգութի՛ւնը յիսունէն վերերուն, օտար, ուրացուած ու հերձուածող: Ու անոնք, որ հասեր էին փառասունի դռներուն, մարդեր էին, Տանթէի փաւարանին արժանի. զրկուած ըլլալով ռեւէ ժողովուրդի աւանդութեան, հոգիին պատկանելու բարիքէն կամ չարիքէն, փանի որ հոգի կազմելու իրենց շրջանը ծախք էին անապատին ու ջարդին ու կ'ապրէին մոռնալու, միշտ, ու մոռնալու սարսափէն հալածական, իրենց գլուխներուն գինը սարսափով մարսել ջանալով ու չկրնալով: Քսանին ու երեսունին մէջտեղ ծաղ-